ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈԶԱ ԱՇՈՏԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ ՊԱՏԺԱՏԵՍԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ԺԲ.00.05 մասնագիտությամբ - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

РОЗА АШОТОВНА АБРАМЯН

ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ДИФФЕРЕНЦИАЦИИ И ИНДИВИДУАЛИЗАЦИИ ИСПОЛНЕНИЯ НАКАЗАНИЯ ЛИШЕНИЯ СВОБОДЫ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – "Уголовное право и криминология; уголовно-исполнительное право"

ЕРЕВАН – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Հարություն Մարտինի Խաչիկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սերգեյ Վահանի Առաքելյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Արթուր Հակոբի Օսիկյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիր

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունիսի 2-ին ժ. 14^{30}-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի ապրիլի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор
Арутюн Мартинович Хачикян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор
Сергей Ваганояич Аракелян
кандидат юрид. наук, доцент
Артур Акопович Осикян

Ведущая организация: **Образовательний комплекс**
министерства внутренних дел РА

Защита состоится 2 июня 2026 года в 14^{30} часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 30 апреля 2026 года.

Ученный секретарь специализированного совета:
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հետազոտության թեման և՛ տեսական, և՛ գործնական ուղղություններով արդիական է, ընդ որում արդիականության ամեն մի ուղղություն բնութագրական է մի քանի առումներով:

Քրեական պատժի տարբերակումը և անհատականացումը քրեակատարողական իրավունքի հիմնական սկզբունքներից են, որոնց բովանդակությունը, դրանցում կատարվող փոփոխությունների ուղղվածությունը ձևավորվում են գլխավորապես հասարակության քաղաքական, սոցիալական, տնտեսական գործոնների ազդեցությամբ: Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման հարցերը կարգավորող իրավական նորմերի պատմական զարգացման, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների գործունեության մեջ դրանց գործնական կիրառման ուսումնասիրությունը նպաստում է տվյալ դրանց՝ որպես քրեակատարողական հիմնարկներում իրավակարգի ամրապնդման միջոցների հետագա կատարելագործմանը, քրեակատարողական օրենսդրության խնդիրների լուծմանը, դատապարտյալների դասակարգման առանձին խմբերի նկատմամբ կիրառվող քրեակատարողական ներգործության ծավալի իրավական ամրագրմանը, քրեական և քրեակատարողական օրենսդրության դրույթների և պատժի նպատակների իրացմանը, ինչպես նաև քրեակատարողական ներգործության միջոցների հանդեպ վերաբերմունքի և դրա ընկալման առանձնահատկությունների ձևավորմանը:

Հետազոտության թեմայի տեսական արդիականությունը պայմանավորված է նրանով, որ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ իրավունքի այդ ճյուղի սկզբունքների հիմնահարցը շատ կողմերով բանավեճային է: Քրեակատարողական իրավունքի տեսաբանները, որոնք զբաղվում են ոլորտի սկզբունքների հիմնահարցերի ուսումնասիրությամբ, միակարծիք չեն այդ սկզբունքների համակարգի, շրջանակի, բովանդակության հիմնահարցերի վերաբերյալ: Այդ տարաձայնությունները հատկապես սուր ու բազմաթիվ են պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների շուրջ: Արդեն տասնամյակներ տևող այդ տեսական բանավեճի ընթացքում քրեակատարողական իրավունքի տեսաբանները չունեն միասնական մոտեցում պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների բուն (տառացի) անվանումից սկսած մինչև դրանց բովանդակության (հասկացության), իրավական նորմատիվ պահանջների, գործողության ոլորտների (համահիրավական, ճյուղային, թե ինստիտուտային), տարբերակման և անհատականացման սկզբունքների միասնության կամ ինքնուրույնության, իրավունքի համակարգի համահիրավական, միջճյուղային, ճյուղային և ինստիտուտային սկզբունքների համակցության մեջ դրանց տեղի և դերի մասին:

Ատենախոսության թեմայի վերը բերված տեսական արդիականությունը միաժամակ ստանում է գործնական կարևորություն պայմանավորված նրանով, որ արդի շրջանում էական վերակառուցման են ենթարկվում քրեական պատիժների համակարգը և դրանց կատարման օրենսդրական չափորոշիչներն ու ընթացակարգերը, քրեակատարողական հիմնարկները: Քրեակատա-

րողական համակարգի բավականին լայն ու խորքային բարեփոխումների արդի շրջանում առաջանում է շատ կարևոր գործնական խնդիր՝ ուսումնասիրել, վերլուծել և գնահատել պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքներից բխող օրենսդրական լուծումներն ու մոտեցումները, այդ սկզբունքների իրացման երաշխիքների համակարգը՝ ընդհանրապես և դրանց իրացվածության աստիճանը նոր օրենսդրության մեջ, ինչպես նաև նոր տեսակի քրեակատարողական հիմնարկների գործունեության հարցում տարբերակման ու անհատականացման սկզբունքների իրականացման արդյունավետության ու բավարար լինելու հիմնահարցերը:

Հետազոտության թեմայի արդիականության վերաբերյալ հիմնավորումները պայմանավորված են գիտատեսական և կիրառական նշանակություն ունեցող և հրատապ հետազոտական թեմայի ընտրությամբ և ուսումնասիրության իրականացմամբ: Խնդիր է դրված իրականացնելու ոչ միայն հիմնահարցի գիտական մշակումներ ու տեսական ճշգրտումներ, այլև այդ հիմքով մշակել գործնական առաջարկություններ՝ ուղղված պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների օրենսդրական բովանդակության ու կենսագործման կառուցակարգերի կատարելագործմանը:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսական **հետազոտության օբյեկտ** են հանդիսանում պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունները, այդ սկզբունքների կենսագործման նորմատիվ իրավակարգավորումների և դրանց կիրառման հիմնահարցերը: Պատիժների կատարման և անհատականացման սկզբունքների իրավական երաշխիքների շրջանակը և դրանց իրացման նորմատիվ ու փաստական վիճակի ուսումնասիրության շրջանակը տարածվել է միայն ազատազրկում պատժատեսակի կատարման վրա՝ հաշվի առնելով այն, որ նշյալ սկզբունքները հենց այդ պատժատեսակի կատարման ու կրման կարգում են առավելապես դրսևորվում: Հարկ է նշել, որ արդի շրջանում ամենաարմատական փոփոխություններն են ենթարկվել հենց այդ շրջանակի հարաբերությունների իրավական կարգավորումները:

Հետազոտության առարկան ընդգրկում է քրեակատարողական իրավունքի պատիժների կատարման տարբերակումն ու անհատականացումը կարգավորող հին և նոր օրենսդրական դրույթները, միջազգային իրավական փաստաթղթերը, դատապարտյալների և քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների անկետավորման նյութերը, հետազոտության թեմային առնչվող պետական մարմինների և հանրային իրավապաշտպան կառույցների կողմից պատրաստված զեկույցները, ինչպես նաև քրեակատարողական ոլորտի գիտական աշխատությունները, որոնք նվիրված են պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների ուսումնասիրմանը:

Ատենախոսական հետազոտության նպատակը, պայմանավորված հետազոտության առարկայով, ենթադրում է իրացման երկու ուղղություն. **առաջին՝** վեր հանել պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների օրենսդրական իրացման երաշխիքների ու կենսագործման կառուցակարգերի գործող համակարգը, գնահատել դրանց շրջանակի բավարարության աստիճանը, բացահայտել առկա թերությունները և այդ հիմքով մշակել դրանց կատարելագործման կոնկրետ առաջարկներ:

Երկրորդ ուղղությունն է ուսումնասիրել պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման որպես քրեակատարողական իրավունքի սկզբունքների տեսական հիմնահարցերը (ներառյալ դրանց բովանդակության, հասկացության, հարաբերակցության) և ստացված եզրակացությունները համադրել այդ սկզբունքների օրենսդրական կարգավորման տեսլականի հետ, արդյունքում մշակելով գործող ՔԿՕ-ով այդ հարաբերությունների կարգավորումը կատարելագործելու առաջարկներ:

Վերը նշված նպատակներով պայմանավորված **ատենախոսական հետազոտության խնդիրներն են՝**

ա) ուսումնասիրել քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքների հասկացությունն ու շրջանակը և պարզել դրանց տեսագործնական հիմնահարցերի արդիական ուղղությունները,

բ) ուսումնասիրել և վեր հանել պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքները իրավական տեղեկության փոխանցման փուլում,

գ) վեր հանել պատիժների կատարման տարբերակման և անհատականացման՝ որպես քրեակատարողական գործունեության մեթոդների ձևավորման ու արդի շրջանում օրենսդրական ամրագրման զարգացումը,

դ) ուսումնասիրել և հստակեցնել պատիժների կատարման տարբերակման և անհատականացման որպես քրեակատարողական սկզբունքների բանավեճային հիմնահարցերի տեսական հետազոտության ուղղությունները,

ե) վերլուծել պատիժների կատարման տարբերակման իրավական սկզբունքի քրեակատարողական հասկացության վերաբերյալ տեսական մոտեցումները, վեր հանել այդ սկզբունքի հատկանիշները և կառուցել դրա հասկացությունը,

զ) ուսումնասիրել պատիժների կատարման անհատականացման իրավական սկզբունքի քրեակատարողական հասկացության վերաբերյալ տեսական մոտեցումները, վեր հանել այդ սկզբունքի հատկանիշները և կառուցել դրա հասկացությունը,

է) իրականացնել պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների գիտական հասկացությունների և դրանց օրենսդրորեն ամրագրված բովանդակության համեմատական վերլուծություն,

ը) ուսումնասիրել և ամփոփ ներկայացնել ազատազրկման կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման նորմատիվ իրավական կառուցակարգերի վերաբերյալ ավանդական տեսագործնական մոտեցումները քրեակատարողական իրավունքում,

թ) ուսումնասիրել ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման սկզբունքի կենսագործման նորմատիվ կառուցակարգերի օրենսդրական բարեփոխումները և վեր հանել դրանց իրավական երաշխիքները, դրանց կենսագործման կառուցակարգերի առանձնահատկությունները,

ժ) ուսումնասիրել ազատազրկում պատժատեսակի կատարման անհատականացման սկզբունքի նորմատիվ կառուցակարգի օրենսդրական բարեփոխումները և վեր հանել սկզբունքի նորմատիվ իրավական երաշխիքների շրջանակը, դրանց կենսագործման կառուցակարգերի առանձնահատկությունները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ պատիժների կատարման տարբե-

ракման և անհատականացման սկզբունքների հետազոտության հիմքերը դրվել են դեռևս խորհրդային ժամանակաշրջանում: Քանի որ պատժի կատարման տարբերակման և անհատականցման սկզբունքները հիմնարար տեղ են գրավում քրեակատարողական իրավունքի սկզբունքների համակարգում, ուստի այդ սկզբունքների բովանդակության և կենսագործման կառուցակարգերին անդրադարձել են խորհրդային և հետխորհրդային շրջանի բազմաթիվ գիտնականներ, մասնավորապես՝ Գ.Ա. Ավանեսովը, Յ.Մ. Անտոնյանը, Գ.Պ. Բայդակովը, Օ.Ի. Բաժանովը, Ն.Ա. Բելյաևը, Վ.Ի. Բրիզգալովը, Ա.Յ. Գրիշկոն, Ա.Ի. Զուբկովը, Ս.Մ. Զուբարևը, Ի.Ի. Կարպեցը, Վ.Ե. Կվաշիսը, Մ.Պ. Մելենտևը, Ա.Ս. Միխլինը, Ա.Ն. Նատաշևը, Ի.Վ. Շմարովը, Ա.Վ. Շամիսը, Վ.Ե. Յուժանինը, Ի.Ն. Պավլովը, Ա.Լ. Ռեմենսոնը, Ա.Ա. Ռյաբինինը, Զ.Մ. Սայֆուտդինովը, Ե.Վ. Ստրուգովան, Վ.Ի. Սելիվերստովը, Ն.Ա. Ստրուչկովը, Ա.Ի. Վասիլևան, Ա.Ա. Տելեգինը, Վ.Ա. Ֆեֆելովը և այլք:

Քրեակատարողական իրավունքի խորհրդային տեսաբանների, ինչպես նաև անցյալ դարի 90-ական թթ. հրապարակված աշխատությունները՝ նվիրված պատժի կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքներին, կառուցված էին խորհրդային քրեակատարողական օրենսդրության և դրանց հիմքում դրված սոցիալիստական մոտեցումների վրա: Այդ հետազոտությունները գնահատելիս պետք է նկատի ունենալ, որ ինչպես խորհրդային, այնպես էլ արդի շրջանի շատ հեղինակներ ավելի շատ մշակել են պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների քրեակատարողական ոլորտում իրացման առանձին ենթաինստիտուտների, իրացման կառուցակարգերի կամ միայն առանձին խմբերի ազատազրկման դատապարտվածների պատժի կատարման տարբերակման ու անհատականացման տեսագործնական հիմահարցերը: Այս հարցում պետք է համաձայնվել Ս.Վ. Բերեզիկովի այն գնահատականի հետ, որ խորհրդային շրջանում գիտական հիմնահարցերի էությունը բացահայտվում էր գլխավորապես գոյություն ունեցող օրենսդրական կառույցների ուսումնասիրության ու մեկնաբանության միջոցով: «Արդյունքում հետազոտողներն իրենց սահմանափակում էին այն խնդիրների և հարցերի (դրանց առումների ու կողմերի) շրջանակով, որոնք արդեն օրենսդրությամբ այս կամ այն կերպ լուծված էին: Օրենքի մեկնաբանությունն այդ ժամանակներում մնում էր գիտական փաստարկման որոնման միակ միջոցը»:

Հետխորհրդային մի շարք երկրներում քրեակատարողական համակարգի բարեփոխումների արդյունքում նոր օրենսդրության ընդունմամբ, բացի սկզբունքների թվարկումից, շատ ընդհանուր կերպով սահմանվեց նաև այդ սկզբունքների նորմատիվ բովանդակությունը, ինչն էլ խթանեց քրեակատարողական իրավունքի սկզբունքների, ներառյալ պատժի կատարման տարբերակման ու անհատականացման, նոր հայեցակարգերի վրա կառուցված հետազոտությունների կատարումը: Դրանց մեջ աչքի են ընկնում Ե.Վ. Ստրուգովայի, Ա.Վ. Բրիլլիանտովի, Օ.Ն. Զվերևայի ատենախոսական հետազոտությունները, որոնք խթանեցին հետագա ատենախոսական քրեակատարողական ուսումնասիրությունների իրականացումը: Այդ ատենախոսությունների մեջ աչքի են ընկնում՝ Ի.Ն. Պավլովի ուսումնասիրությունը, որի հետազոտության առարկայի մեջ ներառված են պատժի կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների տեսական ու գործնական կողմերը, ինչպես նաև Ս.Վ. Բերեզիկովի, Ա.Ի. Դրոզդովի ատենախոսությունները, որոնք, սակայն, նվիր-

ված են միայն տարբերակման սկզբունքի կենսագործման արդյունավետության ապահովման գործնական-կիրառական հիմնահարցերին: Քննարկման առարկայի վերաբերյալ հրատարկվել են նաև առանձին մենագրական աշխատություններ և հոդվածներ:

Այսպիսով՝ թեմայի մշակվածության աստիճանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանել հետևյալ միտումները: **Առաջին՝** տարիների ընթացքում կատարված հետազոտությունների արդյունքում ներկայումս հրապարակում առկա են ատենախոսության հետազոտման առարկայի այս կամ այն հիմնահարցերին առնչվող բազմաթիվ և՛ տեսական, և՛ տեսագործնական ուղղվածություն ունեցող ատենախոսական աշխատանքներ, մենագրություններ, գիտական հոդվածներ: **Երկրորդ՝** չնայած ուսումնասիրությունների մեծ քանակին, պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների տեսական հարցերում գոյություն ունեն բազմաթիվ չլուծված, տեսականորեն չմշակված ու գործնականում չկատարելագործված հիմնահարցեր: **Երրորդ՝** ահռելի տեսական ժառանգության առկայության ու բազմաթիվ տեսականորեն չլուծված հիմանահարցերի առկայության հակադիր միտումները վկայում են այն մասին, որ քրեակատարողական իրավունքի գիտական ոլորտում այս հարցի վերաբերյալ կան էական բացթողումներ ու թերություններ, ինչը արձանագրում են նաև ոլորտի կայացած ու սկզբունքային հետազոտողները: Նրանցից մեկի՝ Ս.Վ. Չուբրակովի գնահատմամբ «տեսակետների մեծամասնությունն աչքի են ընկնում չափից դուրս համառոտությամբ ու նկարագրություններով, բացակայում է կոնկրետությունը, վերլուծությունը, մշակումների խորքայնությունը: Հաճախ հեղինակները շեղվում են հարակից ու հարցի էությանն ուղղակիորեն չվերաբերող խնդիրներից կամ ուղղակիորեն վերարտադրում են նորմատիվ իրավական ակտերի դրույթները: Ընդ որում՝ նույնիսկ հանագամանալից քննարկման դեպքում, որպես կանոն, բոլոր հետազոտողները չեն բացում սկզբունքի բովանդակությունը, այլ խոսում են դրա արտահայտման, ամրագրման կամ իրացման մասին: Արդյունքում, փաստորեն, անհնարին է դառնում առանձին սկզբունքի բովանդակության սահմանների որոշումը, ինչպես օրինակ՝ պարզել թե ինչո՞ւ է դա իրավունքի ճյուղի կամ օրենսդրության սկզբունք, քանի որ դեպքերի մեծ մասում խոսքը գնում է մարմինների գործունեության մեջ դրա արտահայտման մասին»:

Հայաստանի Հանրապետությունում ո՛չ խորհրդային, ոչ էլ արդի շրջանում այս ուղղությամբ հատուկ տեսական կամ գործնական հետազոտություններ չեն իրականացվել: Նոր ՔԿՕ-ը նորովի ամարգրեց պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների բովանդակությունը, սահմանեց քրեակատարողական հիմնարկների նոր տեսակներ և դրանցում գործող պատժի կրման նոր պայմաններ, ինչպես նաև վերանայեց այդ սկզբունքների իրացման երաշխիքներ հանդիսացող բազմաթիվ քրեակատարողական ինստիտուտներ և կառուցակարգեր: Այս համատեքստում որպես մեթոդաբանական հիմք ընդունելով պատժի կատարման տարբերակմանն ու անհատականացմանը նվիրված գիտական մշակու�մները, նոր քրեակատարողական համակարգը անհրաժեշտություն է առաջանում ամփոփել և նոր օրենսդրության հետ համադրված հետազոտել պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների տեսական հիմունքները, դրանց օրենսդրական կարգավորման ձևերը և բովանդակությունը, այդ հիմնարար սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքները:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության հանվող դրույթները: Ատենախոսական հետազոտությունը իրավունքի տեսության հիմնարար, համակարգային հայեցակարգերի գիտական մոտեցումների հիման վրա առաջ է քաշվել քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքների ամբողջական, խորապատկերային համակարգը, որի տեսական նորություն համարվող բաղադրամասերն են՝ սկզբունքի բովանդակության և պահանջների պատշաճ օրենսդրական ամրագրումը. սկզբունքի կենսագործումը կոնկրետացնող և ապահովող նորմատիվ իրավական ինստիտուցիոնալ կառուցակարգերը. քրեակատարողական իրավունքի սուբյեկտների և հատկապես դատապարտյալների իրավական տեղեկացվածությունը:

Աշխատանքում ամփոփվել են պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման որպես քրեակատարողական իրավունքի սկզբունքների տեսական բովանդակության, հասկացության, հարաբերակցության վերաբերյալ տեսական մոտեցումները: Կատարվել է դրանց տիպաբանական դասակարգում, մշակվել են սկզբունքներից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշները և այդ մեթոդաբանական հիմքի վրա կառուցվել է պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման՝ որպես քրեակատարողական իրավունքի սկզբունքների տեսական հասկացությունը, ինչը թեմայի մշակվածության համատեքստում տեսական նորություն է: Միաժամանակ, ստացված տեսական հասկացություններն համադրելով այդ սկզբունքների օրենսդրական կարգավորման տեսլականի հետ, մշակվել են քրեակատարողական նոր օրենսդրությունը կատարելագործելու ուղղված առաջարկներ:

Ատենախոսական աշխատանքով **գիտական շրջանառության մեջ են դրվում և պաշտպանության ներկայացվում հետևյալ հիմնադրույթները.**

1. Քրեակատարողական ոլորտում պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման խնդրի քննարկումն իրավունքի ընդհանուր տեսության մոտեցումների համատեքստում հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ այդ սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքների շրջանակում ներառվում են միջազգային իրավական երաշխիքները. սկզբունքի օրենսդրորեն ամրագրված բովանդակության իրավաբանական ճշգրտությունը և որոշակիությունը. սկզբունքի՝ որպես ընդհանուր դրույթի կենսագործմանն ուղղված կոնկրետացնող նորմատիվ իրավական ընթացակարգերն ու կառուցակարգերը (իրավական ինստիտուտները). քրեակատարողական իրավունքի սուբյեկտների և հատկապես դատապարտյալների իրավական տեղեկացվածությունը. քրեակատարողական իրավունքի սկզբունքի՝ իրավական օրինականությանը համապատասխանող իրագործումը (օգտագործում, կատարում, պահպանում, կիրառում) իրեն բնորոշ ընդհանուր և հատուկ իրավական երաշխիքներով, սոցիալ-իրավական վերահսկողության ընդհանուր և քրեակատարողական իրավական կառուցակարգերը:

2. Պատիժների քրեակատարողական տարբերակումը դատապարտյալների՝ օրենքով սահմանված չափանիշներով ու կարգով դասակարգումն է հարաբերականորեն միասեռ խմբերի, որը կիրառվում է պատժի կատարման սկզբում, ենթադրում է պատժի կրման տարբերվող պայմաններ, գործում է պատժի կրման ողջ ընթացքում, դրական և բացասական ներգործության մի-

ջոցների կիրառմամբ դատապարտյալների մոտ ձևավորում է (խրախուսում է) իրավահպատակ վարքագծի շարժառիթներ և նպաստում է դատապարտյալների վարքագծի փոփոխմանը՝ նպաստելով պատժի կատարման նպատակների իրականացմանը:

3. Պատիժների կատարման անհատականացումը դատապարտյալների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության, նրանց դասակարգման և դրանց արդյունքների հաշվառման միջոցով իրականացվող օրենքով կարգավորված, համակարգված և անընդհատ գործունեություն է՝ ուղղված պատժի կատարման և կրման կարգի, կիրառվող քրեակատարողական ներգործության միջոցների փոփոխմանը, որը դրական և բացասական ներգործության միջոցների կիրառմամբ դատապարտյալների մոտ ձևավորում է իրավահպատակ վարքագծի շարժառիթներ, նպաստում է նրանց վերասոցիալականացմանը և պատժի նպատակների իրականացմանը:

4. Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների վերաբերյալ գիտական հասկացությունների և դրանց օրենսդրորեն ամրագրված բովանդակության համեմատական վերլուծության հիման վրա, ինչպես նաև տարբերակման և անհատականացման վերաբերյալ դատապարտյալների տեղեկացվածության երաշխավորման անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում ենք

➢ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի համապատասխան հոդվածներում լրացումների միջոցով պատիժը տարբերակված և անհատականացված կառուցակարգերով կրելու դատապարտյալի սուբյեկտիվ իրավունքը ճանաչել որպես նրա առանձին հիմնական իրավունք, ինչը դատապարտյալի իրավահպատակ վարքագիծի համար կունենա խթանող ազդեցություն:

➢ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 7-րդ հոդվածը վերաշարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 7. ***Պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման, քրեաիրավական ներգործության այլ միջոցների անհատականցման սկզբունքները***

1. Պատիժների կատարման տարբերակումը և անհատականացումը, քրեաիրավական ներգործության այլ միջոցների անհատականցումը նպատակամղված են դատապարտյալների վարքագիծը վերափոխելուն՝ խթանելով նրանց իրավահպատակ վարքագիծը՝ ներգործության համապատասխան միջոցների կիրառմամբ:

2. Պատիժների կատարման տարբերակումն օրենքով նախատեսված հիմքերով ու կարգով դատապարտյալների դասակարգումն է հարաբերականորեն միասեռ խմբերի՝ յուրաքանչյուրի համար պատժի կրման խիստ որոշակի պայմանների սահմանմամբ:

3. Պատիժների և քրեաիրավական ներգործության այլ միջոցների անհատականացումը դատապարտյալների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության, նրանց դասակարգման և արդյունքների հաշվառման միջոցով իրականացվող համակարգված, անընդհատ գործունեություն է՝ ուղղված պատժի կատարման և կրման կարգի, քրեաիրավական ներգործության միջոցների դրական (բարելավող) կամ բացասական (վատթարացնող) փոփոխությանը:»:

5. Պատիժների տարբերակման և անհատականացման քրեակատարողական սկզբունքների երաշխիք հանդիսացող ինստիտուտների շրջանակի

վերաբերյալ քրեակատարողական իրավունքի տեսաբանների՝ տարբեր ժամանակներում արտահայտած տեսակետների ամփոփումը հնարավորություն է ընձեռում հիմնավորելու, որ պատիժների կատարման տարբերակման սկզբունքն ունի կենսագործման օրենսդրական կոնկրետ ձևեր (լուծումներ), իսկ անհատականացման սկզբունքը՝ որպես ընդհանուր իրավական ելակետային դրույթ, կենսագործվում է միայն գործնական մակարդակում՝ ներթափանցելով քրեակատարողական իրավունքի՝ դատապարտյալի նկատմամբ անհատական մոտեցման հնարավորություն նախատեսող բազմաթիվ ինստիտուտների և նորմերի մեջ: Հետևաբար, անհատականացման կենսագործման երաշխիքների շրջանակը չի կարող դիտվել սպառիչ, որովհետև այդպիսին են քրեակատարողական օրենսդրության բոլոր այն ինստիտուտները և նորմերը, որոնք ենթադրում են անհատական մոտեցում:

6. Ազատազրկման դատապարտվածների դասակարգման ինստիտուտի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ նոր օրենսդրությունը, հետևելով իրավական զարգացման հաջորդայնության սկզբունքին, պահպանել է ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման սկզբունքի հիմնական միջոցը՝ դատապարտյալների դասակարգումը: Տարբերակման քրեակատարողական սկզբունքի հետ է կապված օրենքում ամրագրված դատապարտյալների միայն այն դասակարգումը, որի արդյունքում դատապարտյալների ձևավորված խմբերի համար օրենքը նախատեսում է պատժի կատարման և կրման իրարից տարբերվող պայմաններ: Հետևաբար, պատիժների կատարման տարբերակման սկզբունքի կենսագործման երաշխիք հանդիսացող դատապարտյալների դասակարգման չափանիշներ են՝ ա) հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը, բ) դատարանի դատավճռով նշանակված ազատազրկման ժամկետը, գ) հանցագործության ռեցեդիվը, դ) դատապարտյալի չափահասությունը: Օրենքում տեղ գտած դատապարտյալների այլ դասակարգումները պայմանավորված են քրեակատարողական օրենսդրության այլ խնդիրներով ու սկզբունքներով, դատապարտյալների մի շարք հիմնական իրավունքներով:

7. Ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման խմբերի համար պատժի կատարման տարբերակման խնդիրը լուծելու համար նոր օրենսդրությունը կիրառել է մի շարք իրավական գործիքակազմեր: **Առաջին՝** չափահաս և անչափահաս դատապարտյալների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկներ, **երկրորդ՝** չափահաս ազատազրկման դատապարտվածների քրեակատարողական հիմնարկներում նախատեսվել են ազատազրկման կատարման տարբեր պայմաններով անվտանգային գոտիներ, **երրորդ՝** յուրաքանչյուր անվտանգային գոտում սահմանել է ազատազրկման կրման մեղմ և խիստ պայմաններ, **չորրորդ՝** ազատազրկման դատապարտվածների դասակարգման հիմքում դրվել են օրենքով սահմանված և սկզբնական որոշակիություն ունեցող չափանիշներ, **հինգերորդ՝** նման չափանիշների առկայության դեպքում և քրեակատարողական հիմնարկի տեսակի, և՛ անվտանգային գոտու, և՛ դրանում խիստ ու մեղմ պայմանների որոշման համար սահմանվել է արտադատական ընթացակարգ՝ դրա իրավազորությունը վերապահելով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության տեղաբաշխման հանձնաժողովին և քրեակատարողական հիմնարկի պետին:

8. Պատիժների կատարման անհատականացման սկզբունքի հասկա-

ցության, քրեակատարողական իրավունքի տեսության մեջ մշակված և այդ սկզբունքի կենսագործմանն ուղղված օրենսդրական կառուցակարգերի շրջանակի վերլուծությունը հիմք է տալիս առաջ քաշելու այն թեզը, որ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը նախատեսել է պատիժների կատարման անհատականացման սկզբունքի կենսագործման նորմատիվային համակարգի իրավական հիմնական երաշխիքների համակցությունը:

9. Դատապարտյալների հետ տարվող նախկինում «ուղղում», ներկայումս «վերասոցիալականացում և դրական վարքագծի ձևավորում» կոչվող աշխատանքը, որպես պատժի կատարման անհատականացման իրավական երաշխիք, կարգավորման նոր տեսլականով կրել է առաջընթաց համարվող էական փոփոխություններ, որոնք կարող են նպաստել այդ սկզբունքի պահանջների իրագործման արդյունավետության աստիճանի բարձրացմանը: Նոր իրավակարգավորումներն աչքի են ընկնում իրենց մանրամասնություններով, կոնկրետությամբ, որոշ դեպքերում առավել հստակությամբ: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, պահպանելով մի շարք ինստիտուտներ, ներմուծել է նաև նորերը, մասնավորապես՝ «դատապարտյալի վարքի մշտադիտարկում», «դատապարտյալի ռիսկերի ու կարիքների գնահատում», «վերասոցիալականացման գնահատման հանձնաժողով», «դատապարտյալների հետ տարվող վերասոցիալականացման աշխատանքների գնահատում», «վերականգնողական ծրագրերի մշակում և իրականացում»:

Սակայն դատապարտյալների վերասոցիալականացման և նրանց դրական վարքագծի ձևավորմանն ուղղված աշխատանքի իրավական կարգավորումներում առկա են նաև որոշ թերություններ՝ իրավակարգավորումները հստակեցման կարիք ունեն հատկապես «դատապարտյալների վարքի մշտադիտարկմանը», «դատապարտյալների ռիսկերի ու կարիքների գնահատմանը», «վերականգնողական ծրագրերին» վերաբերող օրենսդրական հասկացությունների, հիմնական չափանիշների, դրանք կարգավորող բլանկետային ենթաօրենսդրական ակտերի որոշակիացման հարցերում:

Հետազոտության մեթոդները: Ատենախոսական աշխատանքի և՛ տեսական, և՛ կիրառական դրույթների մշակման ընթացքում գիտականորեն հավաստի եզրակացություններ ստանալու համար օգտագործվել են ճանաչողության այնպիսի եղանակներ, ինչպիսին են դիալեկտիկական մեթոդը, ուսումնասիրության ընդհանուր տրամաբանական հնարքները, մասնավոր գիտական մեթոդները՝ համակարգակառուցվածքային, կոնկրետ-սոցիոլոգիական, վիճակագրական, հետազոտվող նյութի դասակարգման, ինչպես նաև իրավագիտական հատուկ մեթոդներ՝ համեմատական-իրավական, պատմա-վերլուծական, ձևական-տրամաբանական և այլն:

Հետազոտության տեսական աղբյուրները և նորմատիվ հիմքերը: Ատենախոսական աշխատանքի իրականացման ընթացքում կիրառվել են իրավունքի տեսության տեսական հիմնադրույթները, ճյուղային իրավական գիտությունների՝ քրեական և քրեակատարողական իրավունքների տեսաբաններին, ինչպես նաև կրիմինոլոգների աշխատություններ:

Հետազոտության նորմատիվ իրավական հիմքերն են քրեական և քրեակատարողական իրավակարգավորումներ պարունակող միջազգային փաստաթղթերը, ուժը կորցրած և գործող քրեակատարողական օրենսդրությունը:

Հետազոտության էմպիրիկ հիմքերը: Ուսումնասիրության էմպիրիկ և գործնական հիմքերն են վիճակագրական տվյալները, դատապարտյալների և

քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների շրջանում անցկացված սոցիոլոգիական ուսումնասիրությունները, որոնք հեղինակն իրականացրել է 2022 թ. քրեակատարողական հիմնարկների 100 դատապարտյալների և 20 աշխատակիցների շրջանում, և որոնց արդյունքները մշակվել և օգտագործվել են հետազոտության ընթացքում: Օգտագործվել են նաև այլ հետազոտողների սոցիոլոգիական հետազոտությունները, ինչպես նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարին նվիրված արտահերթ հրապարակային զեկույցի նյութերը (Երևան, 2019), Հայաստանի վիճակագրական տարեգրքի իրավական վիճակագրության նյութերը (2019, 2020, 2021, 2022), ինչպես նաև ՀՀ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018 թ. գործունեության հաշվետվությունը:

Ատենախոսական հետազոտության արդյունքների տեսագործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունը պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների հասկացության, քրեակատարողական բնութագրերի, ինչպես նաև այդ սկզբունքների կենսագործման երաշխիքների համալիր հետազոտությունն է: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հետազոտության օբյեկտ համարվող ՀՀ օրենսդրության մշակման, այն կատարելագործելու, ինչպես նաև իրավապահ մարմինների ու համապատասխան քրեակատարողական հիմնարկների գործունեության բարելավման համար:

Այսպիսով՝ հետազոտության արդյունքները կարող են կիրառվել քրեակատարողական իրավունքի տեսագործնական հետազոտություններում, համապատասխան դասընթացների ծրագրերի, ուսումնական նյութերի պատրաստման, դասավանդման, քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների վերապատրաստման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտությունը կատարվել է ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ և իրականացվել է աշխատանքի քննարկումը և ատենախոսության վերաբերյալ եզրակացության հաստատումը: Ատենախոսական հետազոտաության արդյունքները հրատարկվել են հեղինակի 7 գիտական հոդվածներում: Հեղինակն ատենախոսության թեմայով գիտական զեկուցումներ է կարդացել ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի և իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների ու հայցորդների գիտաժողովներում:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխից, որոնք ներառում են 10 ենթագլուխ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին գլխի՝ *«Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների իրավական երաշխիքների տեսագործնական հիմնահարցերը»*, **1-ին ենթագլխում** *(«Իրավական երաշխիքները» որպես քրեակատարողական իրավունքի տեսության հիմնահարց)* ատենախոսն ուսումնասիրել քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքների հասկացությունն ու շրջանակը և առաջ է քաշել այդ երաշխիքների տեսագործնական հիմնահարցերի հետազոտման արդիական

ուղղությունները: Համադրելով քրեակատարողական և սահմանադրական իրավունքի գիտություններում, ինչպես նաև իրավունքի տեսության մեջ առկա մոտեցումները, հեղինակը եկել է եզրակացության, որ երաշխիքների հիմնահարցը քրեակատարողական իրավունքում գրեթե չուսումնասիրված է: Դրանում շատ են դատապարտյալների «իրավունքների և ազատությունների երաշխիքներին» նվիրված հետազոտությունները, որոնց ամփոփումը հիմք է տալիս եզրակացնելու, որ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ իրավական երաշխիքների հիմնահարցը մեծամասամբ դիտարկվում է իրավակիրառ ոլորտում, անտեսելով իրավական կարգավորման կառուցակարգի այլ փուլերին բնորոշ երաշխիքները:

Ատենախոսի կարծիքով, հիմնահարցի տեսական մեկնաբանության առկա վարկածն ամբողջական չէ, որովհետև չի ներառում իրավական կարգավորման բոլոր փուլերի երաշխիքները, համահունչ չէ սահմանադրագիտության, իրավունքի տեսության մոտեցումներին: Հեղինակն առաջ է քաշում այն թեզը, որ քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքների ամբողջական պատկերը կառուցելու համար անհրաժեշտ է դիմել իրավունքի տեսության հայեցակարգերի օգնությանը և փորձել լուծել առկա տեսական խնդիրները և բարդությունները:

Առաջին գլխի՝ 2-րդ ենթագլխում՝ *«Քրեակատարողական իրավունքի սկզբունքների երաշխիքների հիմնահարցը իրավական կարգավորման կառուցակարգի հայեցակարգի համատեքստում»* ատենախոսն ուսումնասիրել է՝ ա) իրավական սկզբունքների տեղն ու դերն իրավական կարգավորման համակարգում, բ) քրեակատարողական իրավական սկզբունք-նորմերը դիտարկել է իրավունքի համակարգային դրսևորումների, հատկապես իրավական կարգավորման կառուցակարգի շրջանակներում: Հետազոտման այդ ուղղությունը հնարավորություն է տվել առավել հստակ ու ամբողջական պատկերացում կազմել քրեակատարողական իրավունքի սկզբունքների և, մասնավորապես՝ պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման՝ ընդհանրապես կենսագործման և դրա երաշխիքների ամբողջական շրջանակի վերաբերյալ: Հեղինակի տեսանկյունից քրեակատարողական իրավական կարգավորման կառուցակարգը ևս ներառում է այդ իրավունքի ճյուղի նորմերի կազմավորման, իրավաստեղծագործության, իրավական տեղեկութավորման, իրավունքի կենսագործման (իրականացման) և սոցիալ-իրավական վերահսկողության փուլերը, որոնցից ամեն մեկին բնորոշ են երաշխիքների իրենց շրջանակը:

Առաջին գլխի՝ 3-րդ ենթագլխում՝ *«Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների իրավական երաշխիքների տեսագործնական հիմնահարցերի ուսումնասիրության արդիական ուղղությունները»* հեղինակը ցույց է տալիս, որ քրեակատարողական իրավունքի տեսաբանները շոշափելով իրավական երաշխիքների հիմնահարցը քրեակատարողական ոլորտում, դրանք ուսումնասիրում են միայն իրավունքի իրականացման (իրավակիրառման) հարթության վրա: Հաշվի առնելով վերոգրյալը, ատենախոսը գտել է, որ անհրաժեշտ է նաև ուսումնասիրել քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման այնպիսի իրավական երաշխիքները, ինչպիսիք են սկզբունքի օրենքով ամրագրված բովանդակության իրավաբանական ճշգրտությունը և որոշակիությունը, քրեակատարողական իրավունքի սուբյեկտների, հատկապես դատապարտյալների, իրավական տեղե-

կացավածությունը, քրեակատարողական իրավունքի սկզբունքի կենսագործման նորմատիվ իրավական ընթացակարգերը, կառուցակարգերը (իրավական ինստիտուտները):

2-րդ գլխի *«Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների հիմնահարցերը քրեակատարողական իրավունքի տեսության մեջ»* **1-ին ենթագլուխն է՝** *«Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքերի ձևավորման, օրենսդրական ամրագրման գործընթացը և զարգացման տեսական ուղղությունները»*: Այստեղ հեղինակը նախ փորձել է վեր հանել պատիժների կատարման քրեակատարողական տարբերակման և անհատականացման օրենսդրական ամրագրման պատմական էվոլուցիան: Այնուհետև, տեսականորեն չլուծված կամ վիճելի հիմնահարցերի համատեքստում հեղինակը առաջ է քաշել պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների հետազոտության հետևյալ ուղղությունները՝ նախ, պատիժների կատարման քրեակատարողական իմաստով տարբերակման և անհատականացման սկզբունքների վերաբերյալ տարատեսակ մոտեցումների ուսումնասիրությունը, համադրելով դրանք տարբերակման և անհատականացման որպես հետազոտման ու գործունեության մեթոդների ընդհանուր տեսական գիտական պատկերացումներին, այնուհետև՝ այդ հետազոտական աշխատանքի արդյունքների հիմքով փորձել տեսահիրավական գնահատականի կամ արժևորման ենթարկել նոր ՔԿՕ-ով ամրագրված այդ սկզբունքների նորմատիվ բովանդակությունը, ինչպես նաև դրա կենսագործման երաշխիքները՝ քրեակատարողական համակարգի մի շարք էական բաղադրատարրերի արմատական փոփոխությունների շրջանում:

2-րդ գլխի 2-րդ ենթագլխում՝ *«Պատիժների կատարման տարբերակման քրեակատարողական սկզբունքը տարբերակման որպես մեթոդի ընդհանուր իմաստի համատեքստում»* հեղինակը պնդում է, որ պատիժների կատարման տարբերակումը միաժամանակ և՛ քրեակատարողական քաղաքականության մեթոդ է, և՛ միջճյուղային (քրեական, քրեադատավարական և քրեակատարողական) իրավական սկզբունք: Այնուհետև՝ ամփոփելով պատիժների կատարման տարբերակումը քրեակատարողական քաղաքականության մեթոդ համարող հայեցակարգի վերլուծությունը, հեղինակը եզրակացնում է, որ այն չունի տեսամեթոդաբանական հակասություններ պատիժների կատարման տարբերակումը քրեակատարողական իրավունքի (օրենսդրության) սկզբունք դիտարկող հայեցակարգային մոտեցումների հետ:

Ատենախոսի դիտարկմամբ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ամենատարածվածը պատիժների կատարման տարբերակումը որպես քրեակատարողական իրավունքի (օրենսդրության) սկզբունք դիտարկելու հայեցակարգային մոտեցումն է՝ մի քանի տեսական վարկածներով, որոնց առանձնացման հիմքում դրված է այդ սկզբունքի ճյուղային կամ միջճյուղային կարգավիճակի վերաբերյալ տեսական մոտեցումները: Պատիժների կատարման տարբերակումը որպես սկզբունք դիտարկող հեղինակների այդ սկզբունքի բովանդակության վերաբերյալ կարծիքների համադրման ու վերլուծության միջոցով ատանախոսը փորձել է վեր հանել այդ սկզբունքի էությունն ու բովանդակությունը (նորմատիվ իրավական պահանջները), ինչը հնարավորություն է տվել առանձնացնել պատիժների կատարման տարբերակման սկզբունքի բովանդակային հատկանիշները և դրանց հիման վրա կառուցել այդ

սկզբունքի հասկացության բնորոշումը:

2-րդ գլխի 3-րդ ենթագլխում՝ *«Պատիժների կատարման անհատականացման քրեակատարողական սկզբունքի հատկանիշները և հասկացությունը»,* հեղինակը տեսաբանների կողմից այդ սկզբունքի մինչ այժմ կատարված համապատասխան հետազոտությունների արդյունքների համեմատության, վերլուծության, սինթեզման միջոցով ամփոփել և նորովի է դիտարկել այդ սկզբունքին վերագրվող հատկանիշները, փորձ անելով տալ այդ սկզբունքի առավել ամբողջական ու ընդգրկուն հասկացությունը:

«Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքների օրենսդրական բարեփոխումները և կենսագործման կառուցակարգերի հիմնախնդիրները» **3-րդ գլխի 1-ին ենթագլխում** հետազոտվել է ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների օրենսդրական հասկացությունների գիտական և իրավաբանական ճշգրտությունը, դիտարկելով դա որպես նշյալ սկզբունքների կենսագործման երաշխիք: Այնուհետև, ատենախոսության 2-րդ գլխում պատիժների կատարման տարբերակման և անհատականացման մշակված հասկացությունները և եզրակացությունները համադրվել են ՀՀ նոր ՔԿՕ-ի համապատասխան սկզբունքների օրենսդրական բովանդակությունների հետ, համադրված վերլուծության միջոցով գնահատվել են պատժի կատարման տարբերակման և անհատականացման օրենսդրությամբ ամրագրված հասկացությունները, մշակվել են տարբերակման և անհատականացման սկզբունքների օրենսդրական նոր ձևակերպումներ: Այդ վերլուծությունը հնարավորություն է տվել վեր հանել ՀՀ 2022 թ. ՔԿՕ-ի 7-րդ հոդվածում ամրագրված պատիժների տարբերակման և անհատականացման սկզբունքների բովանդակության թերությունները, առաջարկել այն վերաշարադրելու, ապահովելով այդ սկզբունքներից բխող իրավական պահանջների համապատասխանությունը քրեակատարողական իրավունքի գիտամեթոդաբանական մոտեցումներին, ինչպես նաև սույն աշխատանքում մշակված՝ պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների իրավական հասկացությանը:

3-րդ գլխի 2-րդ ենթագլխում՝ «*Ազատազրկման կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման նորմատիվ իրավական կառուցակարգերի շրջանակի վերաբերյալ ավանդական տեսագործնական մոտեցումները քրեակատարողական իրավունքում*» ուսումնասիրվել է քրեակատարողական իրավունքի գիտական գրականության այն հատվածը, որում փորձ է արվել քննարկել պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման երաշխիքները, այլ կերպ ասած դրանց դրսևորման կառուցակարգերը կամ ինստիտուտները, որոնք ամրագրված են եղել այդ ուսումնասիրությունների կատրաման պահին գործող օրենսդրությամբ կամ էլ առաջարկվել են որպես նորարարական բնույթ ունեցող իրավական գաղափարներ: Դա հնարավորություն է տվել կազմել անցյալ դարի վերջերից և մինչ այժմ գործող պատիժների կատարման տարբերակման և անհատկանացման սկզբունքների կենսագործումը երաշխավորող իրավական կառուցակարգերի շրջանակը:

3-րդ գլխի 3-րդ ենթագլխում՝ *«Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման սկզբունքի կենսագործման նորմատիվ կառուցակարգերի օրենսդրական բարեփոխումները և դրանց իրավական երաշխիքնե-*

ը», նախորդ ենթագլխում առաջ քաշված պատիժների կատարման տարբերակման սկզբունքի կենսագործման իրավական կառուցակարգերի բավականին լայն շրջանակը համադրվել է նոր ՔԿՕ-ի իրավակարգավորումների հետ: Դա հնարավորություն է տվել պարզելու, թե դրանցից որո՞նք են հնի վերարտադրություն նոր օրենսդրության մեջ, և որո՞նք են նորություն:

Այդ հիմքով կազմվել է պատիժների տարբերակման սկզբունքի կենսագործման նորմատիվային համակարգի իրավական երաշխիքների հետևյալ համակցությունը. ա) դատապարտյալների քրեակատարողական դասակարգման ինստիտուտը, դասակարգման չափանիշները, բ) ՔԿՀ-ների տեսակների սահմանումը, ինչպես նաև ամեն մի տեսակում քրեակատարողական ներգործության տարբերակումը՝ ըստ դատապարտյալների դասակարգման խմբերի առանձնահատկությունների, գ) ազատազրկման կրման պայմանների (անվտանգային գոտու և դրանում խիստ և մեղմ պայմանների) փոփոխման, ինչպես նաև պատժից ազատելու իրավական հնարավորության առկայությունը՝ ըստ առաջադիմական համակարգի:

3-րդ գլխի 4-րդ ենթագլխում «*Ազատազրկում պատժատեսակի կատարման անհատականացման սկզբունքի նորմատիվ կառուցակարգի օրենսդրական բարեփոխումները և իրավական երաշխիքների շրջանակը***»**, հիմք ընդունելով ատենախոսության 2-րդ գլխի 2-րդ ենթագլխում վեր հանված քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ազատազրկում պատժատեսակի կատարման անհատականացման սկզբունքի բովանդակային պահանջները կենսագործող իրավական գաղափարները և նախկինում գործած ինստիտուտների շրջանակը, հետազոտվել է դրանց կենսագործումը (ամրագրումը) նոր ՔԿՕ-ում, դրանցից ամեն մեկի բնութագրական առանձնահատկությունները, գնահատվել է նոր ՔԿՕ-ն այդ հարցում իրավական զարգացման հաջորդայնության ու նորարարության, երաշխավորող ինստիտուտների ամբողջականության ու համալիրության տեսանկյունից՝ օգտագործելով նաև սոցոլագիական հետազոտությունների արդյունքները:

Ատենախոսության շրջանակում իրականացված հետազոտության արդյունքում կատարել ենք մի շարք **եզրակացություններ**, որոնք հանգում են հետևյալին:

1. Ընդհանրապես երաշխիքների հիմնահարցը քրեակատարողական իրավունքի տեսության գրեթե չուսումնասիրված տեսագործնական հիմնահարցերից է, որտեղ առավել շատ են դատապարտյալների «իրավունքների և ազատությունների երաշխիքներին» նվիրված հետազոտությունները: Դրանց ամփոփումը հիմք է տալիս եզրակացնելու, որ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ իրավական երաշխիքների հիմնահարցը դիտարկվում է նեղ իմաստով, մեծամասամբ վերաբերում է իրավակիրառ ոլորտին, անտեսելով իրավական կարգավորման կառուցակարգի այլ փուլերին բնորոշ երաշխիքները:

2. Քրեակատարողական իրավունքի ոլորտում գործող սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքների հիմնահարցի դիտարկումը հիմնարար, մեթոդաբանական նշանակություն ունեցող գիտական դիրքորոշումների և հայեցակարգերի համատեքստում հնարավորություն է տալիս պնդելու, որ քրեակատարողական սկզբունքի կենսագործման առաջին իրավական երաշխիքը դրա բովանդակության և պահանջների պատշաճ օրենսդրական ամրագրումն է, երկրորդը՝ սկզբունքի կենսագործումը մանրամասնող իրավական ինստիտու-

ցիոնալ կառուցակարգերն են, իսկ իրավունքի իրականացման փուլում առաջ է գալիս երրորդ երաշխիքը՝ օրինականությունը, որը կոչված է ապահովելու քրեակատարողական իրավունքի սկզբունքներին համահունչ ընդունված և դրա կենսագործումն ապահովող իրավունքի նորմերի իրագործումը:

3. Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման քրեակատարողական սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքների շրջանակի վերլուծությունն այդ երաշխիքների հետազոտվածության աստիճանի և հրատապության ու արդիականության չափանիշների տեսանկյունից բերում է եզրակացության, որ առաջնային ուսումնասիրության կարիք ունեն հետևյալ իրավական երաշխիքները՝ սկզբունքի օրենսդրորեն ամրագրված բովանդակության իրավաբանական ճշգրտությունը և որոշակիությունը, սկզբունքի որպես ընդհանուր դրույթի կենսագործման նորմատիվ իրավական ընթացակարգերն ու կառուցակարգերը (իրավական ինստիտուտները), քրեակատարողական իրավունքի սուբյեկտների և հատկապես դատապարտյալների իրավական տեղեկացվածությունը:

4. Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների իրավական երաշխիք համարելով դատապարտյալների տեղեկացվածությունն այդ սկզբունքների կենսագործման հիմնական կառուցակարգերի վերաբերյալ, առաջարկվում է նման տեղեկացվածության ապահովման համար ՔԿՕ-ի համապատասխան հոդվածներում լրացումներ կատարելու միջոցով պատիժը տարբերակված և անհատականացված կառուցակարգերով կրելու դատապարտյալի սուբյեկտիվ իրավունքը ճանաչել նրա առանձին հիմնական իրավունք և այդ մասով լրացում կատարել դատապարտյալի օրենքով ամրագրված հիմնական իրավունքների շրջանակում: Այն կդառնա այդ սկզբունքների կենսագործման կառուցակարգերի դատապարտյալի կողմից իմացության իրական երաշխիք, դատապարտյալի կողմից իրավահպատակական վարքագիծ որդեգրելու համար ունենալով խթանող և խրախուսող նշանակություն:

5. Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման որպես քրեակատարողական գործունեության սկզբունքների ձևավորման ու օրենսդրական ամրագրման միտումները հիմք են տալիս եզրակացնելու, որ պատմության Հին և Միջին շրջաններում ազատազրկման որպես պատժատեսակի սահմանման ու կիրառման գործընթացում նկատվում են տարբերակման և անհատականացման դրվագային դրսևորումներ, եզակի փաստեր: Սակայն միայն նորագույն դարաշրջանում են դրանք վերածվում պենիտենցիար քաղաքականությանը բնութագրական սկզբունքների:

6. 2004 թ. ՔԿՕ-ն առաջին անգամ օրենսդրական մակարդակում ամրագրեց քրեակատարողական օրենսդրության սկզբունքները՝ դրանց շրջանակը և իրավական բովանդակությունը: 2022 թ. ՔԿՕ-ը կատարելագործեց այդ սկզբունքների ամրագրման իրավաբանական տեխնիկան, վերանայեց դրանց շրջանակը, տառացի անվանումները (վերտառությունները), ինչպես նաև յուրաքանչյուրի իրավական բովանդակությունը:

7. Տարբերակման քրեակատարողական հասկացության ուսումնասիրությունը դրա որպես հնարքի ընդհանուր իմաստի համատեքստում հիմք է տալիս եզրակացնելու, որ պատիժների կատարման տարբերակման տեսական գնահատման հարցում առկա են երկու հիմնական տիպային մոտեցում՝ տարբերակումը որպես քրեակատարողական քաղաքականության մեթոդ և տարբերակումը որպես քրեակատարողական իրավունքի (օրենսդրության)

սկզբունք:

8. Պատիժների կատարման տարբերակումը որպես քրեակատարողական քաղաքականության մեթոդ կամ սկզբունք դիտարկելու հայեցակարգային մոտեցումները չեն հակասում և բացառում միմյանց, այլ ընդհակառակը ենթադրում են իրար: Տարբերակման որպես քրեակատարողական մեթոդի պահանջները ելակետային նշանակություն ունեն քրեակատարողական իրավական կարգավորման կառուցակարգի բոլոր փուլերում: Հետևաբար, պատիժների կատարման տարբերակումը որպես քրեակատարողական քաղաքականության մեթոդ՝ դրա մշակման և իրավաստեղծ կենսագործման արդյունքում վերածվում է քրեակատարողական իրավունքի սկզբունքի: Իրավական քաղաքականության կայուն, մշտական, օբյեկտիվ հիմքերը և ելակետային նշանակություն ունեցող որոշակի մեթոդները վերածվում են ոլորտի իրավական սկզբունքի, և ընդհակառակը՝ սկզբունքները մեթոդական նշանակություն ունեն իրավական քաղաքականության համար: Այլ կերպ ասած պատիժների կատարման տարբերակումը միաժամանակ և՛ քրեակատարողական քաղաքականության մեթոդ է, և՛ միջճյուղային իրավական սկզբունք:

9. Պատիժների կատարման տարբերակման սկզբունքի էական հատկանիշներն են. 1) պատիժների կատարման տարբերակումը ենթադրում է դատապարտյալների **դասակարգում** որոշակի հարաբերականորեն առանձին խմբերում, 2) պատիժների կատարման տարբերակումը կատարվում պատժի կրման սկզբում հիմք ընդունելով խիստ որոշակի **չափանիշներ**, 3) պատիժների կատարման տարբերակմամբ դատապարտյալների խմբերի բաժանումը գործում է **պատժի կրման ողջ ընթացքում**, 4) պատիժների կատարման տարբերակման հիմնական հարաբերությունները, դասակարգման խմբերը, չափանիշները և մի շարք այլ հարցեր կարգավորվում են օրենքով, 5) պատիժների կատարման տարբերակումը դրական և բացասական ներգործության միջոցների կիրառմամբ դատապարտյալների մոտ ձևավորում է (խրախուսում է) իրավահպատակ վարքագծի շարժառիթներ և նպաստում է դատապարտյալների վարքագծի փոփոխմանը, դրանով իսկ պատժի կատարման նպատակների իրականացմանը:

10. Քրեակատարողական գրականության մեջ պատիժների կատարման անհատականացման սկզբունքի բազմազան բնորոշումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առանձնացնել այդ սկզբունքի հասկացման երկու տիպ՝ սկզբունքի բնորոշում միայն սկզբունքի հիմքերի (դատապարտյալների դասակարգում անհատական հատկանիշներով) մատնանշմամբ, և սկզբունքի բնորոշումը հասկացության սահմանման միջոցով:

11. Տիպաբանական մոտեցումների վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել անհատականացման սկզբունքին բնորոշ բովանդակային հետևյալ հատկանիշները. ա) պատիժների կատարման անհատականացման հիմքը դատապարտյալների անհատական առանձնահատկություններն են, նրանց վարքագիծը և անձը բնութագրող այլ տվյալները, բ) պատիժների կատարման անհատականացումն իրականացվում է դատապարտյալների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության, նրանց դասակարգման և դրանք պատժի կատարման ընթացքում հաշվառման միջոցով, գ) պատժի կատարման անհատականացման սկզբունքի կիրառման արդյունքում փոխվում են պատժի կատարման և կրման կարգը, կիրառվող քրեակատարողական ներգործության միջոցները, դ) պատիժների կատարման անհատակա-

նացումն օրենքով կարգավորված նպատակամղված, համակարգված, պատժի կրման ողջ ընթացքում անընդհատ իրականացվող գործունեություն է, ե) պատիժների կատարման անհատականացումը դրական և բացասական ներգործության միջոցների կիրառմամբ դատապարտյալների մոտ ձևավորելով իրավահպատակ վարքագծի շարժառիթներ նպաստում է նրանց վերասոցիալականացմանը և դրանով պատժի նպատակների իրականացմանը:

12. Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների գիտական հասկացությունների և դրանց օրենսդրորեն ամրագրված բովանդակության համեմատական վերլուծություն հիման վրա առաջարկվում է ՔԿՕ-ի 7-րդ հոդվածի նոր վերտառությամբ ու բովանդակությամբ խմբագրություն, որը զերծ է վերը նշված տեսագործնական բնույթի թերություններից ու բացթողումներից.

«Հոդված 7. Պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման, քրեաիրավական ներգործության այլ միջոցների անհատականացման սկզբունքները

«1. Պատիժների կատարման տարբերակումը և անհատականացումը, քրեաիրավական ներգործության այլ միջոցների անհատականցումը նպատակամղված են դատապարտյալների վարքագիծը վերափոխելուն՝ խթանելով նրանց իրավահպատակ վարքագիծը՝ ներգործության համապատասխան միջոցների կիրառմամբ:

2. Պատիժների կատարման տարբերակումն օրենքով նախատեսված հիմքերով ու կարգով դատապարտյալների դասակարգումն է հարաբերականորեն միասեռ խմբերի՝ յուրաքանչյուրի համար պատժի կրման խիստ որոշակի պայմանների սահմանմամբ:

3. Պատիժների և քրեաիրավական ներգործության այլ միջոցների անհատականացումը դատապարտյալների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության, նրանց դասակարգման և արդյունքների հաշվառման միջոցով իրականացվող համակարգված, անընդհատ գործունեություն է՝ ուղղված պատժի կատարման և կրման կարգի, քրեաիրավական ներգործության միջոցների դրական (բարելավող) կամ բացասկան (վաթարացնող) փոփոխությանը»:

13. Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման քրեակատարողական սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքների (նորմերի, ինստիտուտների կամ կենսագործման կառուցակարգերի) վերաբերյալ քրեակատարողական իրավունքի տեսաբանների տեսակետների ամփոփումը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ քրեակատարողական իրավունքում դեռ նախորդ դարում ազատազրկման պատժատեսակի կատարման վերը նշված սկզբունքների կենսագործման ավանդական հիմնական երաշխիքներ են պատկերացվել.

ա) ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման սկզբունքի ոլորտում՝ դատապարտյալների դասակարգումը միասեռ խմբերի՝ հաշվի առնելով անձի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, յուրաքանչյուր խմբի նկատմամբ պատժիչ ներգործության միջոցների կիրառման տարբերությունը, որոնց դրսևորման ձևերն են՝ առանձին խմբերին տարբեր տեսակի քրեակատարողական հիմարկներում անջատ պահելը (պատժի կատարման տարբերակում), ամեն մի տեսակի հիմարկում ուղղիչ ներգործության տարբերակում՝ ըստ դատապարտյալների խմբերի տիպաբա-

նական առանձնահատկությունների: Հետազոտողները, բացի այս հիմնական երաշխիքից, ազատազրկման կատարման տարբերակման սկզբունքի կենսագործման երաշխիքներ են դիտարկում նաև առաջադիմական համակարգից խող այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են՝ քրեակատարողական հիմնարկի տեսակը փոխելու հնարավորությունը, միևնույն քրեակատարողական հիմնարկում պահելու պայմանների փոփոխումը, առանց հսկողության տեղաշարժը, քրեակատարողական հիմնարկից դուրս մշակութասպորտային միջոցառումներին մասնակցելը, քրեակատարողական հիմնարկից դուրս բնակվելը, վաղաժամկետ ազատումն իր բոլոր տեսակներով (պատժից պայմանական-վաղաժամկետ ազատելը, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելը և այլն), ցմահ ազատազրկման դատապարտվածների պատժի կրման պայմանները: ՌԴ-ում նման ինստիտուտներ են նաև բանտային հիմնարկների համակարգը և դրանց ներսում ռեժիմային տարբերությունները, դաստիարակչական գաղութները՝ երկու ընդհանուր և ուժեղացված ռեժիմներով, որոնցում տարբերակվում են պատժի կրման սովորական, մեղմացված, արտոնյալ և խիստ պայմանները,

բ) ազատազրկում պատժատեսակի կատարման անհատականացման սկզբունքը դրսևորվում է օրենքով սահմանված այն հնարավորություններում, որոնք թույլ են տալիս փոխել կամ ճշգրտել պատժի ծավալը և քրեակատարողական ներգործության բովանդակությունը՝ դեպի բարելավում կամ վատթարացում՝ ելնելով դատապարտյալի անհատական հատկանիշներից և -վարքագծից՝ պայմանավորված վերասոցիալականացման համակարգով: Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ անհատականացման սկզբունքի իրացման երաշխիքներ են համարում՝ ազատազրկման դատապարտվածների հետ տարվող աշխատանքի նպատակամղվածությունը նրանց վերասոցիալականացմանը. վերասոցիալականացման աշխատանքի ձևերի և մեթոդների հիմնվածությունը դատապարտյալի անձի անհատական տվյալների և պատժի կրման ընթացքում նրա վարքագծի վրա. դատապարտյալների բաշխման, ընդունման և հաշվառման ընթացակարգերի, ինչպես նաև դատապարտյալի անձի՝ հատուկ ծրագրի վրա կառուցված ուսումնասիրության կառուցակարգերի առկայությունը. պատժի կրման պայմանների փոփոխումը՝ մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակում, ինչպես նաև դատապարտյալին մեկ տեսակի քրեակատարաողական հիմնարկից մեկ այլ տեղափոխելը. դատապարտյալների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժերի միջոցների և դրանց կիրառման հստակ ընթացակարգերի սահմանումը. պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելը և այլն:

14. Պատիժների կատարման տարբերակման սկզբունքը լինելով օրենսդրորեն ամրագրված՝ ունի կենսագործման օրենսդրական կոնկրետ ձևեր (լուծումներ), իսկ անհատականացման սկզբունքը՝ որպես ընդհանուր իրավական ղեկավար դրույթ կենսագործվում է միայն գործնական մակարդակում՝ ներթափանցելով դատապարտյալի նկատմամբ անհատական մոտեցման հնարավորություն նախատեսող քրեակատարողական իրավունքի բազմաթիվ ինստիտուտների և նորմերի մեջ: Հետևաբար, պատժի կատարման անհատականացման կենսագործման երաշխիքների շրջանակը չի կարող սպառիչ պատկերացվել, որովհետև այդպիսին են քրեակատարողական օրենսդրության բոլոր այն ինստիտուտները և նորմերը, որոնք հիմնված են անհատականացման սկզբունքի վրա կամ ենթադրում են անհատական մոտեցում:

15. Պատիժների կատարման տարբերակման սկզբունքի հասկացության, քրեակատարողական իրավունքի տեսության մեջ մշակված և օրենսդրության մեջ կիրառվող կառուցակարգերի վերլուծությունը հիմք է տալիս առաջ քաշելու պատիժների կատարման տարբերակման սկզբունքի կենսագործման նորմատիվային համակարգի իրավական հիմնական երաշխիքների հետևյալ համակցությունը՝ դատապարտյալների քրեակատարողական դասակարգման ինստիտուտը, քրեակատարողական հիմնարկների տեսակների սահմանումը, ինչպես նաև ամեն մի տեսակում քրեակատարողական ներգործության տարբերակումը՝ ըստ դատապարտյալների դասակարգման խմբերի, ազատազրկման կատարման և կրման պայմանների փոփոխման՝ ընդհուպ մինչև ազատազրկման կրումից վաղաժամկետ ազատման, իրավական հնարավորությունների առկայությունը:

16. Ազատազրկման դատապարտվածների դասակարգման ինստիտուտի վերլուծությունը հնարավորություն է տալիս առաջ քաշելու եզրակացություն, որ պատիժների կատարման տարրբերակման քրեակատարողական սկզբունքից բխում են օրենքում ամրագրված դատապարտյալների ոչ բոլոր դասակարգումները, այլ միայն նրանք, որոնք ենթադրում են դատապարտյալների խմբերի համար պատժի կատարման և կրման իրարից տարբերվող պայմաններ:

17. Պատիժների կատարման անհատականացման սկզբունքի հասկացության, քրեակատարողական իրավունքի տեսության մեջ մշակված և այդ սկզբունքի կենսագործմանն ուղղված օրենսդրական կառուցակարգերի շրջանակի վերլուծությունը հիմք է տալիս առաջ քաշելու պատիժների կատարման անհատականացման սկզբունքի կենսագործման նորմատիվային համակարգի իրավական հիմնական երաշխիքների հետևյալ համակցությունը՝ ազատազրկման դատապարտվածների վերասոցիալականացմանը և դրական վարքագծի ձևավորմանը նպաստող համակարգված ու անընդհատ գործող կառուցակարգ, դատապարտյալների ընդունման և հաշվառման ընթացակարգերի համապատասխանությունը պատիժների կատարման անհատականացման սկզբունքի պահանջներին, ազատազրկման կրման պայմանների (անվտանգային գոտու և դրանում խիստ և մեղմ պայմանների) փոփոխման, ինչպես նաև պատժից ազատելու իրավական հնարավորության առկայությունը, ազատազրկում կրող դատապարտյալների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժերի միջոցների և դրանց կիրառման որոշակիությամբ աչքի ընկնող կարգի սահմանումը:

18. Դատապարտյալների հետ տարվող նախկինում «ուղղում» կոչված աշխատանքը գործող ՔԿՕ-ն վերանվանել է «վերասոցիալակնացում և դրական վարքագծի ձևավորում», ինչը պատժի կատարման անհատականացման իրավական կարևոր երաշխիք է: Դրա իրավակարգավորումներում նկատվում են ինչպես առաջընթաց, այնպես էլ թերություններ ու բացթողումներ:

19. Դատապարտյալների քրեակատարողական հիմնարկներ ընդունման և հաշվառման ընթացակարգերը հիմնականում համապատասխանում են պատիժների կատարման անհատականացման սկզբունքի պահանջներին: Դատապարտյալի տեղաբաշխումից սկսված մինչև քրեակատարողական հիմնարկ ընդունելու իրավակարգավորումներում ներդրված են պատժի կատարման անհատականացման սկզբունքի կիրառման իրավական նախադրյալները, որոնք լրացուցիչ իրավական երաշխիքներ են դրա արդյունավետ իրականացման համար: Այդ ուղղությամբ օրենսդիրը սահմանել է դատապարտյալին կա-

ռանտինային բաժանմունքում պահելու ավելի երկար ժամկետ, լրացրել է դրանում նրան պահելու ընթացքում լուծվող խնդիրների շրջանակը, ընդլայնել է նրանց փոխանցվող տեղեկատվության շրջանակը: Անորոշություններ կան հատուկ ծրագրի հիման վրա իրականացվող դատապարտյալի անձի ուսումնասիրությունների մասով:

20. Ազատազրկման կրման պայմանների փոփոխման հնարավորությունը ինչպես բարելավման, այնպես էլ վատթարացման ուղղությամբ նոր օրենսդրությունը երաշխավորել է անվտանգային գոտիների և դրանցում մեղմ և - խիստ պայմանների փոփոխման ավելի մանրամասն իրավական կառուցակարգերով (փոփոխման կարգը, դրան մասնակից իրավազոր մարմինները, տեղափոխման մասին որոշումը բողոքարկելու կարգը և այլն), որոնց հիմքում դրված հիմնական գործոնը դատապարտյալի վարքագիծն է:

21. Ազատազրկման դատապարտված անձնաց նկատմամբ կիրառվող կարգապահական ներգործության միջոցների իրավակարգավորումներն իրավաբանական տեսանկյունից ունեն առաջադիմական բնույթ, որովհետև նախատեսում են դատապարտյալի նկատմամբ կիրառվող խրախուսանքի և - տույժի միջոցների ավելի մեծ շրջանակ, ներառյալ պատժի կրման պայմանների դրական և բացասական փոփոխություն, տույժի միջոցների կիրառման ավելի որոշակի կարգ:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. «Спорниые аспекты лишения свободы в различных пенитенциарьных системах», Տարածաշրջան և աշխարհ գիտավերլուծական հանդես, Եր., 2025, հատոր ԺԶ, թիվ 1(56), 33-38 էջեր:

2. «Իրավական երաշխիքները»՝ որպես քրեակատարողական իրավունքի տեսության հիմնահարց», Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, Եր., 2024, թիվ 7-9 /301-303/, 92-99 էջեր:

3. «Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների երաշխիքների հիմնահարցը իրավական կարգավորման կառուցակարգի համատեքստում», Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, Եր., 2024, թիվ 1-3 /301-303/, 295-297 էջեր:

4. «Уголовная концепция дифференциации наказаний как правовой принцип», Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, Եր., 2023, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիվ 10-12 /292-294, 141-151 էջեր:

5. «Պատիժների կատարման քրեակատարողական տարբերակման և անհատականացման օրենսդրական ամրագրման էվոլուցիան», Պետություն և իրավունք հանդես, Եր., 2022, թիվ 3 (94), 187-195 էջեր:

6. «Անչափահաս դատապարտյալների նկատմամբ ազստազրկման կիրառման տարբերակման և անհատականացման հարցերի իրավական կարգավորումը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2018, թիվ 2/2, 247-259 էջեր:

7. «Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման եվ անհատականացման իրավական երաշխիքները», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2015, 249-255 էջեր:

РОЗА АБРАМЯН

ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ДИФФЕРЕНЦИАЦИИ И ИНДИВИДУАЛИЗАЦИИ ИСПОЛНЕНИЯ НАКАЗАНИЯ ЛИШЕНИЯ СВОБОДЫ

РЕЗЮМЕ

Содержание и механизмы реализации принципов дифференциации и индивидуализации наказания рассматривались многими учеными. Оценивая данные исследования, следует учитывать, что многие авторы, как прошлого, так и настоящего, в большей степени разрабатывали вопросы реализации принципов дифференциации и индивидуализации наказания в пенитенциарной сфере в направлении отделных институтов и механизмов реализации, либо вопросы дифференциации и индивидуализации наказания для отдельных групп осужденных, либо чисто практические и прикладные вопросы обеспечения эффективности реализации этих принципов.

Изучение степени разработанности темы дало автору основание выделить следующие тенденции: **Во-первых,** несмотря на большое количество исследований, в теоретических вопросах принципов дифференциации и индивидуализации наказания имеется много нерешенных, теоретически не разработанных и практически не реализованных вопросов. **Во-вторых,** наличише огромного теоретического наследия и противоположные тенденции многочисленных теоретически нерешенных принципиальных вопросов свидетельствуют о существенных пробелах и недостатках в этой проблематике, что фиксируют авторитетные и принципиальные исследователи в этой области.

В этом контексте, взяв за методологическую основу научные труды, посвященные дифференциации и индивидуализации исполнения наказания, обобщены и рассмотрены во взаимосвязи с новым законодательством теоретические основы принципов дифференциации и индивидуализации исполнения наказаний, формы и содержание их законодательного регулирования, правовые гарантии реализации этих основополагающих принципов.

В связи с тематикой диссертации в работе взятыы в основу два направления исследовательских целей.

Во-первых, раскрыть действующую систему гарантий и механизмов реализации законодательного закрепления принципов дифференциации и индивидуализации наказания, оценить степень достаточности их рамок, выявить имеющиеся недостатки и на этой основе разработать конкретные предложения по их совершенствованию.

Во-вторых, изучить теоретические вопросы принципов дифференциации и индивидуализации исполнения наказаний (включая их содержание, понятие, соотношение) и сопоставить полученные выводы с видением законодательного регулирования этих принципов, и в результате разработать предложения по совершенствованию регулирования этих отношений в рамках действующего Уголовно-исполнительного кодекса.

В исследовании на основе научных подходов фундаментальных, системных концепции теории права предложена целостная система правовых гарантий реализации принципов уголовно-исполнительного права, теоретической новизной которой являются следующие компоненты: надлежащее законодательное закрепление содержания и требований принципа; нормативно-правовые институциональные конструкции, конкретизирующие и обеспечивающие реализацию принципа; правовое осведомленность субъектов уголовно-исполнительного права, особенно осужденных.

Обобщая теоретические подходы к теоретическому содержанию, понятию и соотношению принципов дифференциации и индивидуализации исполнения наказания как принципов уголовно-исполнительного права, проведена их типологическая классификация, разработаны признаки, свойственные каждому из принципов, и на этой методологической основе построена теоретическое понятие дифференциации и индивидуализации исполнения наказания как принципов уголовно-исполнительного права, что является теоретической новизной в контексте степены разработки темы.

Одновременно, путем объединения полученных теоретических определении с видением законодательного регулирования этих принципов, были разработаны предложения по совершенствованию нового уголовно-исполнительного законодательства.

ROZA ABRAHAMYAN

LEGAL GUARANTEES OF DIFFERENTIATION AND INDIVIDUALIZATION OF THE EXECUTION OF THE PUNISHMENT OF IMPRISONMENT

RESUME

The content and mechanisms of implementation of the principles of differentiation and individualization of punishment have been considered by many scientists. When evaluating the research data, it should be taken into account that many authors, both past and present, have to a greater extent developed issues of implementation of the principles of differentiation and individualization of punishment in the penitentiary sphere in the direction of individual institutions and mechanisms of implementation, or issues of differentiation and individualization of punishment for individual groups of convicts, or purely practical and applied issues of ensuring the effectiveness of the implementation of these principles.

The study of the degree of development of the topic gave the author the basis to highlight the following trends:

Firstly, despite the large number of studies, in the theoretical issues of the principles of differentiation and individualization of punishment there are many unresolved, theoretically undeveloped and practically unimplemented issues.

Secondly, the presence of a huge theoretical heritage and the opposing tendencies of numerous theoretically unresolved fundamental questions indicate significant gaps and shortcomings in this area of research, which are noted by authoritative and principled researchers in this field.

In this context, taking as a methodological basis scientific works devoted to the differentiation and individualization of the execution of punishment, the theoretical foundations of the principles of differentiation and individualization of the execution of punishments, the forms and content of their legislative regulation, legal guarantees for the implementation of these fundamental principles are summarized and considered in connection with the new legislation. In connection with the topic of the dissertation, two directions of research goals are taken as a basis in the work.

In connection with the topic of the dissertation, the work is based on two directions of research goals.

Firstly, to reveal the current system of guarantees and mechanisms for the implementation of legislative consolidation of the principles of differentiation and individualization of punishment, to assess the degree of sufficiency of their framework, to identify existing shortcomings and, on this basis, to develop specific proposals for their improvement.

Secondly, to study the theoretical issues of the principles of differentiation and individualization of the execution of punishments (including their content, concept, relationship) and compare the obtained conclusions with the vision of the legislative regulation of these principles, and as a result, develop proposals for improving the regulation of these relations within the framework of the current Criminal Executive Code.

In the study, based on scientific approaches of fundamental, systemic concepts of the theory of law, a holistic, fundamental system of legal guarantees for the implementation of the principles of criminal-executive law is proposed, the theoretical novelty of which is the following components: proper legislative consolidation of the content and requirements of the principle; normative and legal institutional structures that specify and ensure the implementation of the principle; legal awareness of subjects of criminal-executive law, especially convicts.

Summarizing theoretical approaches to the theoretical content, concept and relationship of the principles of differentiation and individualization of execution of punishment as principles of criminal-executive law, their typological classification is carried out, the features inherent in each of the principles are developed, and on this methodological basis a theoretical concept of differentiation and individualization of execution of punishment as principles of criminal-executive law is built, which is a theoretical novelty in the context of the degree of development of the topic.

At the same time, by combining the obtained theoretical definitions with the vision of legislative regulation of these principles, proposals were developed to improve the new criminal-executive legislation.